**Արձանագրություն №1**

28.10.2024 թ. տեղի ունեցավ Երևանի №159, №142, №139, №198, №170 և №62 ավագ դպրոցների կառավարման խորհրդի նիստ՝ նոր կազմի բոլոր 15 անդամների մասնակցությամբ:

Օրակարգում՝

1. Կառավարման խորհրդի նախագահի ընտրություն
2. Կառավարման խորհրդի քարտուղարի ընտրություն
3. Խորհրդի նիստերի ժամանակացույցի հաստատում:

1. Ըստ ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ կառավարման խորհրդի ձևավորման կարգի՝ նոր կազմով խորհրդի առաջին նիստը վարում է խորհրդի՝ տարիքով ավագ անդամը:

   Առաջին նիստը վարեց Ա.Տոնոյանը:

   Նա ողջունեց խորհրդի անդամներին, ապա անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ խորհրդի նախագահի ընտրությանը և առաջարկեց թեկնածուներ առաջադրել:

   Առաջադրվեցին Աննա Խաչատրյանի և Արտաշես Թորոսյանի թեկնածությունները:

   Կատարվեց փակ-գաղտնի քվեարկություն :

   Արդյունքում 9 (ինը) կողմ ձայն հավաքեց Ա. Խաչատրյանը, 6 (վեց)կողմ ձայն՝ Ա. Թորոսյանը:

   ԿԽ նախագահ ընտրվեց Ա. Խաչատրյանը:

   Ա. Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար և հավաստիացրեց, որ բոլոր ուժերը կներդնի լավ աշխատելու համար:

2. ԿԽ քարտուղարի ընտրության ժամանակ առաջադրվել է №159 ավագ դպրոցի ներկայացուցիչ Արմինե Գրիգորյանի թեկնածությունը, որն էլ ընդունվեց միաձայն:

3. Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Ա. Խաչատրյանը տեղեկացրեց, որ ԿԽ նիստերը գումարվելու են 3 ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստերը՝ ըստ գործող կարգի:

Կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԿԽ նախագահի ընտրության արդյունքները և խորհրդի նախագահ համարել ընտրված Աննա Խաչատրյանին:
2. Խորհրդի քարտուղար համարել Արմինե Գրիգորյանին:
3. Հաստատել ԿԽ աշխատակարգը. Խորհրդի հերթական նիստերը հրավիրել երեք ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստերը՝ ըստ անհրաժեշտության կգումարվեն գործող կարգի համաձայն:

Նիստը վարեց՝ Առաքսյան Տոնոյան

Անդամներ՝

1. Արտաշես Թորոսյան
2. Աննա Խաչատրյան
3. Դորա Դումոյան
4. Տիգրան Չախոյան
5. Լիլիթ Առաքելյան
6. Գայանե Աբազայան
7. Արմինե Գրիգորյան
8. Աննա Նիազյան
9. Աննա Ասատրյան
10. Նարինե Ջավահիրյան
11. Տաթևիկ Բոշյան
12. Անժելա Մարգարյան
13. Հասմիկ Մարտիրոսյան
14. Առաքսյա Տոնոյան
15. Անահիտ Գևորգյան